ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հունվարի 18-ին կայացավ Նոր Արտագերս համայնքի ժողով՝ մասնակցությամբ 48 անդամների:

Ժողովին ներկա էր Արմավիրի մարզպետարանի աշխատակից Համլետ Կուրղինյանը, ներկա էին նաև դպրոցի, բուժ. ամբուլատորիայի և համայնքապետարանի աշխատակիցները:

Ժողովը նախագահում էր համայնքի ղեկավար Խաչատուր Ջանազյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Վարդանյանը:

Օրակարգ

1. Նոր Արտագերս համայնքի ղեկավարի 2016թ. երկրորդ կիսամյակի և գյուղապետարանի տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվություն:

Զեկ. Խ. ՋԱՆԱԶՅԱՆ

2. Համայնքի հիմնախնդիրները:

Զեկ. Խ. ՋԱՆԱԶՅԱՆ

Օրակարգի հաստատման վերաբերյալ առարկումներ չեղան:

1. Լսեցին

Գյուղապետարանի 2016թ. երկրորդ կիսամյակի և տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվությունը:

2016թ. երկրորդ կիսամյակում համայնքում կատարվել է զգալի աշխատանքներ:

Վերանորոգվել է խորքային հորի պոմպերը և սնեցող բաքերը, ոռոգման ջուրը հասանելի է եղել բոլոր հողօգտագործողներին:

Հողօգտագործողներն բաժանվել է շուրջ 20 տ. ազոտական, կալիումական, ֆոսֆորական պարարտանյութեր և 2000լ. դիզելային վառելանյութ:

Ստացված բերքը գարնան ցրտահարության և կարկտահարության պատճառով եղել է բավականին ցածր և անվորակ,որը առաջացրել է ստացված բերքի իրացման դժվարություններ:

Ինչ վերաբերվում է գյուղապետարանի նկատմամբ բնակչության պարտավորություններին՝ հողի հարկի և գույքահարկի հավաքագրմանը, ապա ցածր բերքի ստացումը առաջացրել է բնակչության անվճարունակությանը,որի պատճառով ել հողի հարկի գանձումը կազմել է 29%, իսկ սեփական եկամուտների գծով հավաքագրումը կազմել է 43,6%:

Կազմակերպվել է միջոցառումներ՝ համայնքի միջնակարգ դպրոցի ավարտական դասարանի աշակերտների վերջին զանգի, սեպտեմբերի 1-ի և ամանորի կապակցությամբ: Գումարվել է ավագանու 6/վեց/ նիստ:

Շուրջ երկու միլիոն հարյուր իննսունհինգ հազար 22 դրամ տրամադրվել է որպես օգնություն:

Առաջին դասարան դպրոց հաճախող 14 երեխայի նվիրել ենք պայուսակներ և գրենական պիտույքներ:

Ամանորի կապակցությամբ 170 երեխայի նվերներ է բաժանվել:

Արտահայտվեցին Ա. Բաղալյանը, Ս. Խաչատրյանը: Նրանք տվեցին իրենց դրական գնահատականը գյուղապետարանի կատարած աշխատանքների վերաբերյալ:

Լսեցին-2

Համայնքի հիմանղնդիրները

1. Կուլտուրայի տան հիմնանորոգում
2. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում
3. Խմելաջրի ջրագծերի հիմնանորոգում
4. Գյուղամեջյան ճանապարհի 1,5 կմ. տարածության ասֆալտապատում:
5. Մատուռի կառուցում:

Ժողովը որոշեց

Հանձնարարել համայնքի ղեկավար Խաչատուր Զանազյանին զբաղվելու համայնքի հիմնախնդիրների իրականացման վերաբերյալ հարցին, հատկապես խմելաջրի խողովակների նորոգմանը:

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԶԱՆԱԶՅԱՆ

18.հունվար 2017թ.